

Ավետիս Ահարոնյանի նամակները Սևրի պայմանագրի ստորագրման նախապատրաստական աշխատանքների մասին

Սևրի հաշտության պայմանագիրը ստորագրվել է 1920թ. օգոստոսի 10-ին, (Փարիզի կենտրոնից 10 կմ. հեռավորության վրա տեղակայված արվարձանում) Թուրքիայի սուլթանական կառավարության և Առաջին աշխարհամարտում հաղթած դաշնակից պետությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Չինաստան, Հայաստան և այլք) միջև: Հայաստանի Հանրապետության անունից պայմանագիրը ստորագրել է Ա.Ահարոնյանը: Սևրի հաշտության պայմանագրի «Հայաստան» բաժինը ընդգրկում է 88-93-րդ հոդվածները: Թուրքիան Հայաստանը ճանաչում էր որպես անկախ պետություն, կողմերը համաձայնում էին երկու երկրների միջև կատարվելիք սահմանագատման հարցը թողնել ԱՄՆ-ի որոշմանը:

Հայ պատմությունը Սևրի հաշտության պայմանագիրը գնահատում է միանգամայն հակադիր տեսակետներից. կամ գովաբանում է, կամ էլ՝ ամբողջովին թերագնահատում: Համապատասխանաբար, Անտանտի անդամ երկրների որոշումը՝ արևմտահայ չորս նահանգները Հայաստանի մաս հռչակելու հարցում, գնահատվում է դրական, կամ էլ՝ այդ երկրները մեղադրվում են հայ ազգային շահերի դավաճանության, մշտապես նենգ ու հայադավան քաղաքականությունը վարելու համար: Իրականությունը, սակայն, ավելի բարդ է, քան թվում է առաջին հայացքից: Հայաստանը դառնում էր միջազգային կարևոր պայմանագրի կնքման կողմներից մեկը և դա ստիպում էր սփյուռքին ու հանրապետության ներսում առկա հասարակությանը հստակեցնել գործող յուրաքանչյուր կազմակերպության, հատկապես՝ Ազգային պատվիրակության ու նրա ղեկավարների դերն ու կարգավիճակը: Եվ, ամենինց առաջ, հարկավոր էր դրսևորել շատ ավելի մեծ ուշադրություն և հարգանք սեփական պետության կառույցների հանդեպ: Այնինչ, Ազգային պատվիրակության առաջնորդները չէին թաքցնում իրենց ցածր կարծիքը ՀՀ կենսունակության ու նրա վարչական հմտությունների մասին: Երևանյան հանրապետությունը էլ ավելի մեծ սատարման կարիք ուներ, քանի որ մեր ժողովուրդը, ինչպես դիպուկ նկատել է Ն.Ադոնցը, ստացել էլ շատ յուրահատուկ պայմանագիր. այն խաղաղություն էր բերում ու հռչակում էր նոր երկիր ստեղծումը՝ սակայն առանց վերջինիս սահմանները նշելու*: Վերոհիշյալ հանգամանքը վերաբերում էր միայն հայերին: Օսմանյան կայսրության այլ շրջաններում առաջացած բոլոր երկրների սահմանները անմիջապես նշվում էին: Հայաստանի պարագայում սահմանագծման հարցի անորոշությունը շատ վտանգավոր էր, քանզի մեր հանրապետությունը այդ պահին չունեի բավարար քանակությամբ զորք, որպեսզի իր ուժերով հաստատվեր նրան հատկացված արևմտահայ չորս նահանգներում:

Արդեն Ման Ռեմոյի կոնֆերանսի ժամանակ (18-26.04.1920թ.) Դաշնակիցները չէին թաքցնում, որ իրավապես ճանաչելու են նոր, ընդ-

* Ադոնց Ն., Հայկական հարց, Երևան, 1996, Հայկական հարցը Սևրում, էջ 122:

լայնված Հայաստանը, սակայն զորք չեն ուղարկի հաղթահարելու համար վերջինիս կայացման խնդիրներն և ապահովելու նրա անվտանգությունը: Հետայսու, Հայաստանի ղեկավարությունը ինքն էր ստանձնում թշնամու հետ նոր բախման պատասխանատվությունը: Իսկ թշնամու հետ սպասվելիք պատերազմը անխուսափելի և ակնառու էր. 1920թ. հունիսի 20-ին սկսված հունական բանակի հարձակումը (այդ իրադարձությունների մասին մանրամասն տեղեկություններ հավաքածուի երրորդ փաստաթուղթը) նպատակ ուներ ստիպելու Կոստանդնուպոլսի իշխանություններին ընդունել Սևրի պահանջներն ու ստորագրել նրանց թելադրված պայմանագիրը: Նկատենք, որ ինքը՝ պայմանագրի տեքստը, Դաշնակիցները ամփոփել են մայիսի 11-//-60 ին, բայց առանց հունական բանակի լայնածավալ առաջխաղացման հնարավոր չէր հաղթահարել հակառակ կողմի առարկություններն ու քաշքշուկը:

1920թ. ամռանը Անտանտի երկրները բաժանվեցին երկու ճամբարի. Անգլիան և Հունաստանը պնդում էին, որպեսզի Թուրքիան ստորագրի նրան ներկայացված պայմանագիրը, իսկ Ֆրանսիան և Իտալիան չէին բացառում Թուրքիայի օգտին լրացուցիչ զիջումների կարելիությունը:

Ընդ որում, իտալացի արտգործնախարարը պարզորոշ նշում էր, որ հետագա զարգացումների վերաբերյալ բանակցությունները անհրաժեշտ է անցկացնել ոչ թե Կ.Պոլսում տեղակայված Թուրքիայի հին իշխանությունների, այլ՝ նրա նոր ուժի՝ քենալականների հետ: Այս և այլ հարցեր քննարկելու համար Դաշնակիցները անցկացրեցին երեք հանդիպում: Առաջինը. 1920թ. մայիսին, Բոյուսելում գումարված միջազգային ֆինանսական համաժողովն էր, որին, Բելգիայի ԱԳՆ-ի հրավերով, դիտորդի կարգավիճակով մասնակցեց նաև հայկական պատվիրակությունը: Այդ համաժողովին հետևեցին Դաշնակիցների Գերագույն խորհրդի նիստը Բուլոնում (1920թ. հունիսի 21-ին) և Սպայուն (1920թ. հուլիսի 7-ին):

Հրապարակվող հավաքածուի երրորդ փաստաթղթից երևում է, որ Ա. Ահարոնյանը «միավորել» է Բոյուսելի և Բուլոնի հանդիպումները, քանզի նա որևէ բան չի գրել ֆինանսական համաժողովն վերհանված խնդիրների մասին, փոխարենը ներկայացրել է Բուլոնյան բանակցությունների ընթացքում մշակված հարցերը, բնականաբար՝ քաղաքական բնույթի:

Ցանկանում ենք փաստել այն հանգամանքը, որ Սպայուն քննարկվել է Թուրքիայի մեծ վեզիր Դամադ Ֆերիդի պատասխանը, որում նա 1914թ. ռուս-թուրքական միջպետական սահմանն ընդունելի էր համարում որպես ապագա հայ-թուրքական միջպետական բաժանագիծ: Հունաստանի վարչապետը դեմ էր Թուրքիային նոր զիջումներ անելուն, քանզի իր երկրի բանակը սրընթաց առաջանում էր փոքրասիական թատերաբեմում: Միաժամանակ, հայերիս համար խիստ կարևոր էր տարածքային այն մեծ տարբերությունը, որը առկա էր Թուրքիայի կողմից ընդունելի 1914թ. սահմանների և արևմտահայ չորս վիլայեթներ ընդգրկող՝ Անտանտի կողմից հաստատված Հայաստանի նոր բնագծերի միջև: Հայ-թուրքական վիճելի հողային զանգվածի ահռելի չափսերը, ապագա միջպետական հստակ սահմանագծման բացակայությունը (անորոշ էր նույնիսկ այն ներկայացնելու ժամկետը), հայ-թուրքական միջպետական

սահմանագծման խնդրին քաջածանոթ եվրոպացի դիվանագետների ու փորձագետների կողմից այդ խնդրի անտեղի վերահասցեավորումը ԱՄՆ նախագահին բարդ կացության առջև էր դնում ՀՀ դիվանագետներին, քանզի հայերին հատկացվելիք նոր պետության եզրերը ձևավորվում էին ոչ թե հայ ժողովրդի ջանքերով ու ներուժով, կամ տվյալ երկրամասում (վերոհիշյալ չորս նահանգներում) հայ բնակչության ներկայությամբ, այլ՝ եվրոպական երկրների նվիրատվությամբ: Վերջինները՝ ԱՄՆ-ի հետ միասնաբար, արդարացիորեն նշում էին, որ արևմտահայերի բնաջնջումը իրենց իսկ բնօրրանում արդյունքն է Օսմայան կայսրության հանցավոր քաղաքականության: Դաշնակիցները՝ երկու կողմերի սահմանագատման հարցերը լուծելիս, հայերի ազգաբնակչության կորուստները չէին դիտում որպես հիմախնդիր, նրանք սպանվածների իրավունքներ ու ծայները հավասարեցնում էին կենդանի մնացածներին, Անտանտի ղեկավարները հիմք էին ընդունում նախապատերազմյան ժամանակաշրջանի վիճակագրական տվյալները, մինչդեռ թուրքական կողմը լիովին օգտվում էր իր ճիգերով ստեղծված դրությունից՝ Արևմտյան Հայաստանի ամայի և Արևելյան Հայաստանի արյունաքամ լինելու վիճակից: Հենց վերոնշյալ նպատակի համար էր Թուրքան մտել համաշխարհային պատերազմի մեջ:

Հետևաբար, 1920թ. ամառը, ոչ թե դիվանագիտական քննարկումներն ու վեճերը, այլ հունական բանակի հաջող հարձակումը ստիպեց թուրքերին կնքել Սևրի հաշտության պայմանագիրը:

Ինչպես երևում է հավաքածուում հրապարակվող չորրորդ փաստաթղթից, հայ-հունական ռազմական համագործակցության հարցը ոչ միայն քննարկվել է, այլև՝ մերժվել է Ա.Ահարոնյանի, Գ.Ղորղանյանի և Ա. Խատիսյանի կողմից, քանզի //61 Սևրի պայմանագրի համապատասխան՝ Հայաստանին վերաբերող բաժինը դեռևս հստակեցված չէր և ՀՀ բանակն էլ անհրաժեշտ քանակությամբ ուժեր չունեին օսմանյան բանակի դեմ պատերազմելու համար: Հունաստանի վարչապետը հայկական զորքից ռազմական հաջողություններ էր պահանջում և սա լրջագույն եզրահանգումներին առիթ էր տալիս. քանի որ ՀՀ-ն ի վճակի չէր իր բանակի ուժով տեր կանգնել Սևրի պայմանագրում դրոշմված նրա ազգային իրավունքներին, հետևաբար. պայմանագիրը պետք էր անհապաղ բանակցությունների առարկա դարձնել ինչպես խորհրդային, այնպես էլ թուրքական իշխանությունների հետ, առավել ևս, երբ հայ պետական գործիչները լավատեղյակ էին այդ կողմերի դիվանագիտական շփումների մասին:

Հրապարակվող առաջին փաստաթղթում մատնանշված է Ա.Ահարոնյանի բացասական վերաբերմունքը Կարսում և Ալեքսանդրապոլում ծավալված 1920թ. մայիսյան զինված ելույթների նկատմամբ: Հնարավոր է, որ դրանք իրոք հանգարում էին ՀՀ պատվիրակությանը կնքել Սևրի պայմանագիրը, այնուամենայնիվ, նրանք լրջորեն վկայում էին հանրապետությունում առկա ներքաղաքական ծանր խնդիրների մասին: Առավել ևս, որ մայիսյան ելույթները արձագանք էին հանդիսանում Ադրբեջանի՝ արագ ու խաղաղ ճանապարհով իրականացված խորհրդայնացմանը:

Իսկ Ադրբեջանը՝ ի տարբերություն Հայաստանի, տարածաշրջանում հանձին թուրքիայի ուներ ռազմական դաշնակից, ու Բաքվի պարագլուխները անմիջապես ենթարկվել էին թուրքական հրամանատարության նրանց տված հանձնարարության անհապաղ կերպով ընդունել նոր իրավիճակը, այն է՝ խորհրդայնացումը:

ՀՀ ղեկավարությունը, մերժելով Կարսում և Ալեքսանդրապոլում առաջարկված քաղաքական կուրսը, չստացավ թուրքիայի վրա ճնշում գործելու լրացուցիչ լծակ, և, միաժամանակ, չգնաց հունական բանակի հետ համատեղ գործողությունների իրականացմանը: Արդյունքում, քեմալականները, հերթականությամբ, երկու կողմերին էլ մատնեցին ծանր պարտության, ընդ որում, առաջին պարտվողը՝ Սևրի պայմանագրի ստորագրումից ընդամենը մեկուկես ամիս անց, դարձել էր Հայաստանի Հանրապետությունը: Ու նշված ժամանակահատվածում չեն նշմարվում որևէ քայլեր, որպեսզի պայմանագիրը հետագա դիվանագիտական առևտրի առարկա դառնար տարածաշրջանում երկու հիմնական՝ խորհրդային ու թուրքական, քաղաքական ուղղությունների վրա:

Հարկադրված ենք ընդունել Ա.Նասիբյանի գնահատականի իրավացիությունը**, որ Սևրի պայմանագիրն որպես Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական կարևոր ձեռքբերում անբողջովին ներկայացնում է կարևոր մի օրինաչափություն, համաձայն որի՝ քաղաքական յուրաքանչյուր հեռանկար հղի է և իր մեջ է պարփակում նրան համարժեք վտանգ: Առավել ևս, երբ այդ հեռանկարը ապահովված է ոչ թե սեփական ուժերով, այլ՝ արտաքին գործոններով:

№ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.ԱՅԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ Հ. ՕՐԱՆՋԱՆՅԱՆԻՆ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 մայիսի 1920թ., Փարիզ

«Սիրելի Համո

Ձեզանից լուր չստանալով Հայաստանում և առհասարակ Անդրկովկասում հեղեղվող անցքերի մասին, ուղարկեցի դեպի Երևան պ.Ա. Փիրալյանին¹ բերանացի պատմելու Ձեզ, թե ինչպես են անդրադառնում այստեղի քաղաքական //-62 շրջաններում անդրկովկասյան անցքերը և ի՞նչ ենք մտածում մենք: Հետևապես՝ խնդրում են պ.Ա.Փիրալյանի ասածները նկատել որպես պատվիրակության ենթադրություններ և կարծիքներ, որոնց արժեքը կախված է Ձեզ մոտ կատարվող անցքերի կարևորությունից և մեզ հասնող լուրերի ճշտության աստիճանից: Պ.Ա.Փիրալյանի ասելիքի մասին ես այստեղ լռում եմ. կավելացնեմ միայն մի քանի կետեր:

1) Նախընթաց նամակներովս գիտեք, որ Գերագույն խորհուրդը Վ. Վիլսոնին² դիմեց իբրև իրավարար որոշելու մեր և թուրքիայի սահման-

** Nassibian A., Britain and the Armenian Question. 1915-1923, Lnd., 1984, p.188-189.

ները և ընդունելու Հայաստանի մանդատն, եթե հնար է: Գիտեք նաև, որ Վ.Վիլսոնին առաջարկված է մեր սահմանները գծել Վանի, Բիթլիսի, Երզրունի, Տրապիզոնի վիլայեթների շրջանում: Վերջին պայմանը նրա համար էր, երևի, որ Վ.Վիլսոնը իր հայանպաստ տրամադրությունը շատ հեռու չտանի և Հայաստանին չկցի թուրքական լայն շրջաններ: Մանավանդ անգլո-ֆրանսիական համաձայնության զոնաների վրա չթևակոխի: Վախկար, որ Վ.Վիլսոն թեկուզ այս սահմանափակումը նկատի առնելով, կարող է հրաժարվել: Բարեբախտաբար, երկու օր առաջ պաշտոնապես հայտնի եղավ, որ Վ.Վիլսոնը համաձայն է դառնալ մեր սահմանների խնդրում իրավարար: Մենք, իհարկե, գոհ ենք: Ենթադրություն կա, որ Վ.Վիլսոն մեզ կտա ոչ միայն Երզրուն, այլ հավանաբար, Երզնկան ու Տրապիզոնը: Այդ կտեսնենք. հաստատն այն է այսօր, որ Վ.Վիլսոնի արբիտրաժն ի վնաս մեզ լինելու չէ:

Ինչ վերաբերում է մանդատին, այս մասին էլ այսօր շատ կարևոր լուր հասավ. Վ.Վիլսոնը առանձին [ուղերձով] դիմել է ամերիկյան Սենատին խնդրելով ընդունել Հայաստանի մանդատը: Այս լուրը քաղաքական շրջաններում եղավ անակնկալ ու մեզ համար շատ հաճելի անակնկալ: Բազմաթիվ ենթադրությունների մեջ՝ հետևյալ երկուսը համարվում են ամենեն հավանականը. 1) կամ Վ.Վիլսոնը հոգեբանական մոմենտը պատշաճ է համարում եվ վստահ է, որ դիմումը Կոնգրեսին նպատակին կհասնի, կամ 2) Վ.Վիլսոնը լավ գիտենալով, որ իր առաջարկը անպատճառ պիտի մերժվի, այնուամենայնիվ դիմել է, որպեսզի իր վրայից պատասխանատվությունը վերանա, քանի որ և մենք, և Խաղ[աղության] Համագումարը և գրեթե ողջ քաղաքակիրթ աշխարհը նրանից, Վ.Վիլսոնից է սպասում Հայաստանի հովանավորությունը: Ո՞րը կարդարանա այս երկու ենթադրություններից, այդ ցույց կտա մոտիկ ապագան. ասեմ միայն, որ Ձեր խուճապային հեռագրերի վրա (Ս.Մամիկոնյանից³) ես ամերիկյան դեսպանին [մոտ] գնացի, երկարորեն խոսեցի և հանձնեցի շատ կարևոր հուշագիր, որ դեսպանը նույն օրը հեռագրեց նախագահին: Միաժամանակ հեռագրեցի Գարոին⁴ և Ջ.Ջերարդին⁵, և երկու օր առաջ վերջինից պատասխան ստացա, թե նախագահին տեսել է, և թե նա շատ լրջորեն զբաղված է Հայաստանի խնդրով:

Բազմաթիվ հիասթափումներից հետո, ինչպես տեսնում ես, նորից մեր անճարության մեջ հայացքներս դառնում են դեպի Ամերիկա և Վ.Վիլսոն: Սպասենք: Ուզում եմ հավատալ, որ այս նամակից առաջ դուք մեզանից կարևոր հեռագիր կստանաք:

2) Անշուշտ, դուք էլ մեզ հետ շատ գոհ չեք Վ.Վիլսոնի դանդաղությունից, բայց ցավն այն է, որ Վ.Վիլսոնն իր վճռական խոսքն ասելու է մեր սահմանների մասին միայն թուրքերի հետ պայմանագիրը ստորագրելից հետո: Այստիսով Վ.Վիլսոնի վճիռը շատ չի ուշանա. բայց կարծիք կա, որ նա ստիպված լինի սպասել ոչ թե պայմանագրի ստորագրության, այլ և ռատիֆիկացիային. այս է անախորժը, որովհետև կարող է երկարել: Բայց վերջինս լոկ իբրև ենթադրություն է:

3) Քանի որ Վ.Վիլսոնը նշանակված է Գերագույն իրավարար մեր սահմանների մի մասի, հարմար չէ՞ք գտնում և հնար չկա՞ արդյոք մեր

հարևանների հետ համերաշխորեն դիմումն անել նրան ընդունելու առհասարակ և մեր մյուս սահմանների որոշումը մեր երկու հարևանների հետ: Խնդրում են այս մասին լուրջ խորհրդակցեք. սա լավագույն լուծումը կլիներ անդրկովկասյան այս անվերջանալի ու ծանր կնճռների: Եթե անհնարին է այդ Ադրբեջանի հետ, ըստ իս բոլորովին հնարավոր է վրացիների հետ, և ըստ իս լավագույն է սկսել Վրաստանից, որոնց հետ մեր հարաբերությունը հնար կտա անշուշտ W.Wilson-ին դիմելու, մանավանդ //-63 որ այս մասին համաձայնություն կա արդեն երկու կառավարությունների մեջ: Այստեղ մեր և վրաց պատվիրակությունների բանակցությունների ընթացքում Ն.Չխեիձեն⁶ հայտարարեց վերջում, թե պետք եղած իրավասությունը չունի և թե դա վրաց կառավարության գործն է, խոսեցեք վրաց կառավարության հետ. ավելի լավ է չսպասել Գերագույն խորհրդին, որ միշտ դանդաղ է:

4) Ներփակ երկու հեռագրական պատճեններից կտեսնես, թե Հռոմ գումարված Ազգերի լիգայի ժողովին դիմումն կատարեցի ընդունելու Հայաստանը այդ Լիգայում: Պատասխանից նկատում ես, որ մեր կառավարությունը պետք է պաշտոնական դիմումն կատարի, խնդրում են ուղարկել ինձ այդ դիմումը, ես կներկայացնեմ ուր հարկն է. պետք է շուտ անել:

5) Ձեռքերի խնդրի մասին Ձեզ կպատմի Ա.Փիրալյանը:

6) Ես խորապես ցավում եմ, որ մեր կառավարությունն այսքան անուշադիր եղավ դեպի իր խոստումները: - Օգանեսովի⁷ բանբակը չստացվեց և մենք գտնվում ենք ֆինանսական ամենածանր կացության մեջ: Ստիպված ծախսում ենք մեր ձեռքի տակ գտնվող գումարներ, որոնք մերը չեն, և որը պետք է շտապով վերադարձնել, ավելացնեմ - և քանիտրորդ անգամ - որ ես չստացա իմ խնդրած, քո խոստացած ստացականները և դրված են ամենափափուկ կացության մեջ: Չեն հասկանում այս անտարբերությունը և խորապես վշտացած են մեր կառավարության վարի ծառայողների այս ապշեցուցիչ անհոգության վրա: Այս փաստը մինակ բավական է վկայելու, թե ի՞նչ անտերություն է իշխում մեր վարչական գործերում:

7) Ես հավատացած էի, որ քո վերադարձով կառավարությունը կշտապեր մեկին նշանակել ինձ մոտ պատասխանատվությունն ինձ հետ բաժանելու համար: Եվ ըստ իս, Հ.Քաջազունին⁸... [լավագույնն է⁹], կերևի թե ընդհանուր շփոթ կացությունը և ձեր ծանր վիճակը հնար չտվին այս մասին խորհիլ: Ես նորից հիշեցնում եմ քեզ և խնդրում եմ չբավականանաս այն համոզումով, թե շուտով ամեն ինչ կվերջանա: Սա կարող է ճշմարիտ լինել, բայց անակնկալները կանխելու համար և առհասարակ բազմաթիվ այլ պատճառներով՝ Հ.Քաջազունին այստեղ, Եվրոպայում շատ ավելի օգտակար կլիներ, քան Ամերիկայում: Ես դեռ Լոնդոնից նրան գրեցի և խնդրեցի Եվրոպա գալ, նա պատասխանեց, թե որոշ Միսսիս չունի, այնպես անորոշ գալ հարման չի տեսնում: Ահա կացությունը: Հավանաբար մինչև այս նամակի քեզ հասնելը ես կհեռագրեմ քեզ. կրկնում եմ, թե այս տողերը կարդալու պահուն իրերը վճռապես այս կերպարանքը ունենան, որ առհասարակ պատվիրակությունը նկատվի

ավելորդ (անընդունելի), ապա հեռագրով նշանակեցեք Յ.Քաջազնունուն և հրահանգեցեք անմիջապես եվրոպա շտապի: Իմացա Ա.Էնֆիաջյանից¹⁰, որ նա համեմայն դեպս հուլիս 7-ին մեկնող նավի վրա տեղ է պահել իրեն:

8) Ինչպես գրել եմ նախընթաց նամակումս, չմոռանաք իսկույն հեռագրով իմ մանդատն լրացնել նոր հավելվածով, թե ես իրավունք ունեմ դաշնակից պետությունների թուրքերին առաջադրած խաղաղության պայմանագիրը ստորագրել հանուն Հայաստանի Հանրապետության: Սա անհրաժեշտ է:

9) Պողոս փաշան¹¹ վախ ունի, որ Գերագույն խորհուրդը նրա մանդատը բավարար չի նկատի և չի թույլ տա ստորագրել խաղաղության պայմանագիրը և այսպիսով ես մենակ կմնամ ներկայացուցիչ Հայաստանի: Այս վախն այնքան նեղել է թշվար ծերունուն, որ նա նորերս Մ. Աճեմյանի¹² խորհրդով համաձայն էր իմ միջոցով խնդրել մեր կառավարությունից մանդատն՝ ստորագրելու դաշնագիրը որպես Հանրապետության ներկայացուցիչ: Վերջերս սակայն բուլշևիկների առաջխաղացման լուրերով քաջալերված և ենթադրելով, որ մենք ամեն ինչ կկորցնենք, այլևս խոսք չի անում մեր կառավարությունից ստանալիք մանդատի մասին, և նույնիսկ հույս ունի, որ հիշյալ անակնկալների պատճառով Հանրապետությունը իսպառ կզրկվի ստորագրելու իրավունքից, թե ինքը թուրքահայ կառավարությունը կկազմի այստեղ և կերթա մենակ ներկայացնելու միայն թուրքահայության անունից: Ես նվիրական հավատ ունիմ, որ նրա հույսերը չեն արդարանա, որ դուք կկարողանաք մեր բացարձակ անկախությունը ապահովել հե-/-64 ռացնելով սովետներից մեզ սպառնացող վտանգը: Եթե հավատս արդարացավ՝ ապա Պողոս] փաշան երևի նորից պիտի դիմի ինձ և խնդրի մեր կառավարության մանդատն: Այդ դեպքում պիտի պայման դնեմ 1) որ ազգային կոչված պատվիրակությունը ամբողջապես լուծվի, այլևս երբեք չկազմվելու համար: 2) Փաշան լինի պարզ delegate¹³, և ոչ թե նախագահ: 3) Անպայման ենթարկվի մեր կառավարության պայմաններին և 4) պատվիրակությունը լուծվելեն վերջ այլևս չճգնի որևէ դեր խաղալ որպես թուրքահայերի ներկայացուցիչ: Ճշմարիտն ասած, գրում եմ քեզ այս բոլորը ու վստահ չեմ, թե այդ վատ ծերունին ընդունակ է կարգի ու պետականության - նույնիսկ վախ ունիմ, որ մի անգամ մեր կառավարությունից էլ մանդատ ստանալով, նա այդ էլ կդնի Կաթողիկոսից¹⁴, Արևմտահայ համագումարից, պատրիարքարանին կից գործող համազգայինից ստացած մանդատների վրա և կշարունակե դառնալ (անընդունելի): Այս է ցավը. ահա թե ինչու մեծ վարանումն պիտի ունենամ ձեզի դիմելու ժամին: Բայց թե հեռագրեցի և խնդրեցի՝ ապա պիտի ենթադրես, որ փոքրագույն չարքին եմ ընդունել, որովհետև ըստ իս դարձյալ լավ է նրան որպես պարզ delegate մեր կառավարության իշխանության տակ դնել, քան թե թողնել այսպես սանձարձակ ու փառամոլ գործունեության մեջ:

Բայց մինչև որ ինձանից հեռագիր չստանաք՝ չլինի թե որևէ կողմնակի դիմումի վրա այդպիսի որոշումն տաք: Սա կլինի անդարմանելի սխալ: Լոնդոնից ապրիլի մեջ իմ և Պողոս փաշայի ստորագրությամբ

[Զ.]Կերզոնի¹⁵ գրույցի մասին եթե հեռագիր ստացել եք, դա կեղծիք է փաշայի և [Զ.]Մալքունի¹⁶ սարքած:

Ձերն համբույրներով քո Ա. Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, թ.143-147: Բնագիր: Մեքենագիր, ձեռագիր լրացումներով:

№ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՐ Ա.ԱՅԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ Հ.ՕՅԱՆՁԱՆՅԱՆԻՆ՝ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՁԵՆՔԸ
ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15 հունիսի 1920թ., Փարիզ

«Ձեզ հեռագրեցի երկու օր առաջ բրիտանական պատվիրակության միջոցով զեմքերի և ռազմամթերքի մասին: Այդ հեռագրի պատճենը դրկում են ներփակ հ. 1:

Շտապում են դրկել նաև այս զեմքերի և ռազմամթերքի մասին Լոնդոնում կնքված համաձայնությունը՝ մերոնց և Վրաստանի ներկայացուցիչների մեջ: Այս պատճենը կրում է հ.2: Ինչպես տեսնում եք այս համաձայնությունով ռազմամթերքի ամբողջ ապրանքի 73%-ը մեզ է հասնելու, միայն 27%-ը Վրաստանին, պայմանով որ այն ժամին, երբ վրացական բաժինը հասնի իրենց սահմանը, մերն էլ հասնի մեր սահմանին և հանձնվի մեր իշխանություններին: Իհարկե, մեր ապրանքը պիտի փոխանակվի վրացական հաղորդակցական երկաթուղիներով և վրաց կառավարությունը պիտի ապահովի այդ տրանզիտը արդեն երկու կառավարության մեջ գոյություն ունեցող տրանզիտի պայմանագրով: Մի խոսքով, Վրաստանը իր 27% բաժին պիտի ստանա միայն այն պայմանով, որ ապահովի մեր 73% ապրանքի փոխադրությունը մինչև մեր սահմանը: Ինչ վերաբերում է վճարին, քանի որ մենք կանխիկ չենք վճարել, հետևապես վրացիք էլ իրավունք են ստանում վճարել մեր տրված ապառիկի ճիշտ պայմաններով: Այս են գլխավոր գծերը համաձայնության, որ Դուք ստանում եք: Հույս ունիմ, որ արդեն դրկած եք Բաթում հատուկ հանձնաժողով, որ վրացի ներկայացուցիչների հետ կձեռնարկի ապրանքի բաժանման, ինչպես և փոխադրության մանրամասնի մշակումին: Վրաց կողմից գալիս է նրանց ներկայացուցիչը Լինդոնի Դ.Գամբաշիձե¹⁷. //-65 խոսք եղավ ուղարկելու նաև զեմերալ Գ.Ղորղանյանին¹⁸, բայց ըստ իս դա անհրաժեշտ չէր. զեմերալը թուրքական դաշնագրի խնդիրներով տակավին այստեղ հարկավոր է: Երրորդ փաստաթղթի պատճենը հ.3 այն է, որի իսկականը ես ու փաշան ստորագրել ենք և հանձնել Դ.Գամբաշիձեին, հայտարարելով, որ ընդունում ենք Լոնդոնում կնքված պայմանագիրը:

Հույս ունիմ՝ բարի կլինիք այս կարևոր խնդրի կարգադրության մասին պատվիրակությանս իրազեկ պահել:

Հարգանքներով Ա. Ահարոնյան

Հայաստանի Հանրապետության պատվիպակության նախագահ

Յ.Գ. Ռազմամթերքի և զեմքերի գործի գլխավոր կարգադրողն է բրի-

տանական կառավարության կողմից գնդապետ Կ.Ստոուլբսը¹⁹, որին իհարկե կընդունեք վայել մեծարանքով: Նա գիտի մեր ու վրացիների մեջ կայացած համաձայնությունը, ինչպես և բրիտանական կառավարությունը: Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, ք.152-153: Բնագիր: Մեքենագիր:

№ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՐ Ա.ԱՅԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ Հ.ՕՅԱՆՋԱՆՅԱՆԻՆ՝
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7 հուլիսի 1920թ., Փարիզ

«Քո վերջին նամակը ապրիլի 26-ից է: Մեր երկրի անցուդարձի մասին երկու ամսից ի վեր ոչինչ չգիտեմ: Ձեր ղրկած այսպես կոչված կուրյերները²⁰ բերել են զանազան առթիվ հին-հին լրագրեր ու բյուլետեններ: Առաջինները հնոտի դարձած, երկրորդները լեցուն փարիզյան և առհասարակ արտասահմանյան գործակալությունների հեռագրերով: Քեզ կպատմի Արմենակ Բարսեղյանը²¹ այն վիրավորական, տխուր, անհասկանալի հորիզոնները, որոնց ենթակա են եղած քո և այլոց ղրկած այդ սուրհանդակները: Ձեր հեռագիրները հասնում են (եթե հասնում են) 3-4 շաբաթից. մեծ մասամբ սուրհանդակով են իմանում այդ հեռագրի մասին: Կացությունն այնպես էր՝ երբ դու այստեղ էիր և դառնապես ապրել էիր այս վիճակի բոլոր ծանրությունը, ինչպե՞ս է, որ և քո օրոք շարունակվում է այս դրությունը. խորհում եմ և բացատրել չեմ կարողանում: Իհարկե, բյուլետեններից վերջի վերջո իմացա, որ մեր կառավարությունը փոխվել է, իմացա և մեր նոր նախարարների անունները, բայց կարծում ես, որ ես պետք չե՞ որ իմանայի, թե ինչու՞ այս փոփոխությունը, ո՞վ պիտի ինձ ասի, լրագիրը թե՞ ողորմելի բյուլետենը: Պատվիրակություն գնաց Մոսկվա ի՞նչ ծրագրով, ի՞նչ հույսերով, պետք չե՞ որ իմանա պատվիրակությունը, երբ չորս կողմից պաշարվել ենք որոտընդոստ դիտավորյալ լուրերով, որը հերքելու, ցրելու պետք կա: Միայն այս երկու օրինակը տվի, որ գաղափար կազմես այս թշվառ անորոշության, որի մեջ խարխափում եմ: Հույս ունեի, որ գեթ Ա.Փիրալյանի հետ ղրկածս պատասխանը կառնեն: Իզուր, նորից լռություն: Վերջապես լսեցի, որ Ա.Խատիսյանն²² է գալիս - ուրախացա, որ կիմանամ ամեն ինչ: Եվ հանկարծ հեռագիր Ֆ.Թախթաճյանից²³ թե Ա.Խատիսյանը գնում է նախ Ջնյուռնիա, Եգիպտոս: Կարո՞ղ ես երևակայել զարմանքս ու ցավս: Ստիպված եղա երկու - երեք հեռագիր ղրկել Պոլիս Ա.Խատիսյանին հասկացնելու համար, որ առանց Փարիզ և անցած դարձածին ծրագրերին տեղեկանալու, անգործնական է փոխառության համար գնալ Եգիպտոս, այն էլ ամառը, երբ ոչ ոք կա այնտեղ: Եվ վերջապես համոզեցի Ա.Խատիսյանին նախ Փարիզ գալ: Այսօր հեռագիր ստացա, թե կհասնի 4-5 օրից: Ահա դրությունը՝ այս // -66 պայմանների մեջ կհասկանաս անշուշտ, թե ինչու որպես գերագույն միջոց խորհեցի ղրկել դեպի Ձեզ Արմենակ Բարսեղյանին,

հանձնարարելով հասնել և վերադառնալ, բերելով ինձ բոլոր տրված խնդիրների պատասխանները: Ու այս պատճառով նամակս կարճում եմ. ամեն ինչ պատմել եմ և բացատրել դր. Ա.Բարսեղյանին, որը կծանոթացնի քեզ իր մտադրությունների և սպասելիքների հետ: Շատ եմ խնդրում, լիուլի ընդարձակ պատասխաններ տալ գրաբերիս և իսկույն ճամբու ձգել: Պատասխաները պիտի լինին գրավոր և ստորագրված այնպիսի խնդիրների մասին, որոնք ինձ դիմումի հիմք պիտի ծառայեն:

Քաղաքական կացության մասին շատ բան չունիմ ասելու այս անգամ: Սպասողական դրություն է: Մայիս 11-ին թուրքերին դաշնագիրը հանձնելուց հետո վերջապես հունիս 26-ին նրանք տվին իրենց հակառաջարկները: Եվ այս անգամին թուրքերը եղան անպատկառ, գրեթե ցինիկ և չափազանց անզգույշ: Գրեթե ամբողջապես մերժել են դաշնագիրը, իսկ հայկական խնդրում ոչ մի զիջում: Կովկասյան Հայաստանն են ճանաչում և նրան իբրև սահման նախկին ռուս-թուրքական սահմանը: Այս է բոլորը: Բարեբախտաբար մինչև այս պատասխան ստանալը դաշնակիցները մի համաժողով ունեցան Բուլոնում (ես էլ գնացի տեսնվեցի Է.Վենիզելոսի²⁴, իտալական արտաքին գործոց նոր նախարար Կ.Սֆորցայի²⁵, բելգիական արտաքին գործոց նախարար Պ.Հիմանսի²⁶ և մի քանի այլ կարևոր անձանց հետ): Ահա այս համաժողովում Է.Վենիզելոսը կարողացավ համոզել նախ Դ.Լյոյդ Ջորջին²⁷, ապա մյուսներին, որ իրավունք տան հույն բանակին քայլել թուրք նացիոնալիստների, ուրեմն քեմալիստների դեմ: Ինչպես պիտի երևա հեռագրից, մինչև այսօր հույները հաջողությամբ հառաջ են գնում և ըստ երևույթին Անգլիան հույների միջոցով վճռել է ճնշել քեմալիստների շարժումը և իրագործել տալ դաշնագիրը: Վերջին ամսում սկսված թուրքասիրական լեզուն ֆրանսիական մամուլում հանկարծ փոխվեց, մանավանդ որ անգլիացիք արևելյան գործերը միշտ կապում են Հռենոսյան անցքերի հետ շատ մեծ վարպետությամբ: Այժմ կարելի է զորեղ հույսեր տածել, որ թուրքական ճնշումը մեր սահմանների վրա զգալապես կթուլանա: Երկրորդ հույսն այն է, որ թուրքերը ստիպված պիտի լինին ստորագրել դաշնագիրը՝ առանց կարևոր փոփոխությունների: Արդեն Ջմյուռնիան և Թրակիան Է.Վենիզելոսը այս նոր պատերազմով ամրապնդել է, սպասելի է որ այս պայմաններում քեմալիստները կամաց-կամաց և ոտքի տակի հողը կկորցնեն, եթե հունական հաղթությունները շարունակվին: Այս պարագաներում գումարվեց նախ Բոյուսելի²⁸, ապա այսօրվանից Սպայի համաժողովը, որ սկզբում միայն Վերսալի դաշնագիրն իրագործելու միջոցները պիտի խորհեր, և այժմ կամաց-կամաց պարզվում է, որ պիտի խմբագրվի այնտեղ թուրքերի վերջին հակառաջարկներին դաշնակիցների տալիք պատասխանը: Հետևապես՝ ես վաղը եթե մեկնում եմ Սպա, ուր բելգիական կառավարությունը արտակարգ սիրալիրությամբ իմ տրամադրության տակ է դրել մեր պատվիրակության համար անհրաժեշտ սենյակներ՝ լավագույն հյուրանոցներից մեկում: Որչա՞փ կտևի համաժողովը, ի՞նչ արդյունքով կվերադառնամ, այդ կհաղորդեմ իսկույն՝ հաջորդ սուրհանդակով: Առայժմ, ինչպես երևում է նշաններից, հավանաբար թուրքերին մի նոր պայմանաժամ տան, և պահանջեն ստորագրել դաշնագիրը: Բայց

սա ենթադրություն է:

Այսպես թե այնպես, ես հետո տանում եմ Սպա թուրքերի հակառաջարկների մեզ վերաբերյալ մասի պատասխանը: Միաժամանակ այդ պատասխանը կներկայացնեմ Սպայում բոլոր պատվիրակություններին: Ղրկվում է նաև նախագահ Վ.Վիլսոնին: Ամերիկայում մերոնց իրազեկ եմ պահել և խնդրել աշխատեն իրենց կողմից Վ.Վիլսոնին պետք եղած նյութեր տալ և ազդեցություն գործեն, երբ պետք լինի իրավարարություն իրագործել:

Ես շատ եմ ցավում, թե ինչու՞ հակառակ իմ բազմաթիվ խնդիրներին ու դիքումներին Դուք 1) չկամեցաք նշանակել քո փոխարեն մի նոր պատվիրակ և 2) ինչու՞ ժամ առաջ չհասցրիք իմ լիազորությունը խնդրածս հավելվածն այն մասին, թե ես իրավունք ունիմ ստորագրել նաև թուրքական դաշնագիրը: Այս բանը խնդրել էի վերջին անգամ Ա. Փիրալյանի միջոցով, միթե՞ ճշմարիտ, նա այնքան ուշ // -67 հասավ, որ հնար չեղավ մինչև այժմ ինձ հասցնել այդ գրությունը: Ինչ վերաբերում է երկրորդ պատվիրակին՝ գրել եմ, նորից կըրկնեմ, որ նրա անհրաժեշտությունը մեծ է, ինչու՞ թերացար: Չէ՞ որ անգամ դաշնագիրն ստորագրելուց հետո էլ դեռ երկար աշխատանք է հարկավոր թափել նրա պայմաններն իրագործել տալու համար:

Մեր պատվիրակությունը մայիս 11-ից, այսինքն թուրքական դաշնագիրը հանձնելու օրից, երբ մենք կոչվեցինք պաշտոնապես մյուս պետություններին համահավասար իրավունքով իբրև դաշնակից ներկա լինելու - նկատվում է իսկական իրավատեր մեր դատին: Գերագույն խորհրդի քարտուղարությունը միայն մեր դիմումը պաշտպանել էր - մեզ է ղրկում բոլոր պաշտոնական գրությունները և մեզնից Լոնդոնում ընդունում պատասխանները: Արդեն դաշնագիրը հանձնելու ցերեմոնիային էլ գլխավորապես մենք էինք հրավիրված ներկա լինել: Թեև մի ձախող դիպված արգելք եղավ, որ ես հասնեմ ժամանակին: Նորերս էլ մեզնից ուզեցին մեր պատվիրակության բոլոր անդամների լիակատար ցանկը՝ զանազան հանձնաժողովներում աշխատելու համար: Այս վերջին պարագան ստիպեց ինձ մեր խորհրդականներն ավելացնել թվով, նոր մասնագետներով և հատկապես քանի մը թուրքահայերով: Այդպիսով այժմ մեր պատվիրակության ֆինանսական, դիվանագիտական ու տնտեսական խորհրդականներից բացի, քեզ հայտնել ենք հետևյալ անձինք ևս՝ Գ.Սինապյան²⁹, Կ.Պոլսից, (նախկին նախարար) Տ.Չայան³⁰, որին դու ճանաչում ես Կ.Պոլսից, Review-ի խմբագիր էր այնտեղ, բժ. Յ.Նեվրուզ³¹, Ռուբեն Բերբերյան³², Գ.Աստվածատուրյան³³: Գիտես որ զինվորական խորհրդական գեներալ Գ.Ղորղաանյանի աշխատակից կարգեցինք իր ցանկությամբ քարտոզագրաֆ Ջ.Խանզադյանին³⁴, ունեինք նաև Ա.Էնֆիաջյանը³⁵, որին այժմ ընկերանում է իբրև ֆինանսագետ Ռուբեն Բերբերյանը: Սիմոն Յակոբյանի³⁶ մեկնելուց հետո ընդհանուր քարտուղարությունն ստանձնեց Ա.Յանընյան³⁷: Մ.Աճեմյանը դժվարացավ իր անունը Գերագույն խորհրդին տալ քեզ հայտնի պատճառներով: Պողոս փաշայի մասին քեզ երկարորեն կզեկուցի պ.Ա.Բարսեղյանը: Կարճ ասեմ, 10-16 հոգով նորից մի ծիծաղելի համագումար կազմեց Փարիզ Մանչեստրի,

Լոնդոնի և Փարիզի հայ գաղութների անդամներով, և մի նոր պատվիրակություն ընտրեց, ինքը միշտ իրեն գլուխը թողնելով, դուրս Վ.Թեքեյանին³⁸, Ա.Չոպանյանին³⁹ ու պրոֆ.Ա.Տեր-Յակոբյանին⁴⁰ և ներառնելով մեր բժ. Յ.Նեվրուզին, Գ.Սինապյանին, և ինչ որ Լ.Մկրիտչյան⁴¹ Եգիպտոսից: Նախ հրաժարվեց փաշան - ինքը հասցրեց Պոլիս, Եգիպտոս, Ջմուռնիա, Ամերիկա իր հրաժարումը, ապա հետ առավ հրաժարականը ու մնաց: Հրաժարվում էր՝ իբր թե հիվանդության պատճառով: Երբ նոր պատվիրակությունը կազմվելու վրա էր՝ անցյալ տարվա պես դիմեց ինձ թե ի՞նչ պայմաններով պետք է գործակցենք այսուհետև: Ես տվի հետևյալ Ֆորմուլը, որ գրում եմ քեզ ֆրանսերեն⁴²...

Դժգոհ մնաց, ասաց որ այսպիսով ամեն պայմանագիր մենակ Ձեզ կմնա ստորագրել, բայց վերջում ստիպված եղավ համաձայնվել: Ավելացնեմ, որ համագումարն իսկ որոշումն է կայացրել, թե այս ազգային կոչված պատվիրակությունը պիտի դադարի դաշնագիրն ստորագրելուց անմիջապես հետո: Ավելացնեմ նաև, որ դաշնագիրն ստորագրելու իրավունք ունենալու համար մի առժամանակ տրամադիր էր դիմել մեր կառավարությանը, բայց վերջերս դիտավորությունը հանկարծ փոխեց և աշխատում է կողմնակի բավական վատ միջոցներով, անգլիական ու հույս ունի ֆրանսիական կառավարությունների միջոցով իր դիրքն ամրապնդել որպես Թուրքաց Հայաստանի ներկայացուցիչ: Այս պարագայի բոլոր տգեղությունը ես իրեն զգալ տվի ժողովում և շատ ողորմելի եղավ իր պաշտպանության մեջ: Երանի թե շուտով հասնի ստորագրության օրը դաշնագրի և մեր դատը ազատվի այս վտանգավոր և անխիղճ ծերունուց: Թուրքահայ և ռուսահայ հատվածական, մարդավաճառ և կործանարար վեճերը այս անմիտ ու սնափառ ծերունուն ներշնչումն է, ինչպես գիտես, և շատ եմ վախենում, որ դեռ երկար ժամանակ նա այս վատ պառակտումը քաջալերի իր արբանյակների միջոցով:

Դուք էլ, և դու մասնավորապես, նույնպես մեղք ունիք, ինչու՞ մինչև այժմ գեթ թուրքահայ դաշնացականների չառաք: Սա ի՞նչ համառություն է, որ ահագին //-68 շփոթի և չկանության պատճառ է: Չէ՞, [որ] դու խոստացար մեկնելիս, ինչու՞ այսպես շուտ մոռացար - ի՞նչ կա այդտեղ, ի՞նչ ազդեցություններ: Նորից կրկնեմ, թեկուզ դաշնակցականներ լինի, դուք պարտավոր եք նախարարների կեսը թուրքահայ դարձնել: Ինձ թվում է, թե այս հանգամանքը նշանակություն կունենա նաև բոլշևիկների աչքում: Խնդրում եմ, շուտով մեր կառավարությունը դարձրեք երկու կողմի հայության իսկական պատկեր: Առանց դրան իզուր կփորձեք ընդարձակ փոխառություններ կնքել: Արմենակը կպատմի երկարորեն:

Հուլիս 6-ին և 7-ին գումարվում է այստեղ Փարիզում հայասերների կոնգրես բոլոր քաղաքակիրթ երկրների ներկայացուցիցների: Արմենակը կպատմի արդյունքը: Ձեռներեցությունը մեծ մասամբ իմն է: Նպատակս էր Գերագույն խորհրդի կողքին մեր բարեկամների հեղինակավոր ձայնը լսելի անել մեր հարցի այս վախճանական լուծման ժամերին:

Սրտագին բարևներով՝ Ա.Ահարոնյան.»

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, թ.156-161: Բնագիր: Մեքենագիր, ձեռագիր լրացումներով:

N° 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ Հ ԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Ա.ԱՅԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ
ՆԱԽԱՐԱՐ Հ.ՕՐԱՆՋԱՆՅԱՆԻՆ՝ ՄՊԱՅՈՒՄ ԱՆՑԿԱՑՐԱԾ
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

16 հուլիսի 1920թ.,⁴³ Փարիզ

«Սիրելի Համո

Իմ կրկնակի հեռագրական դիմումներին վերջապես Ա.Խատիսյանը եկավ Փարիզ: Երևանի աներևակայելի անկարգությունից հետո, ես գտա այս միակ միջոցը ճշգրիտ գաղափար կազմելու համար մեր երկրի վիճակի և վերջին ծանրակշիռ իրադարձություններին: Գիտեմ, պիտի տրտնջաք, որ ես նրան իր ճամբից խոտորեցի, մասնավորապես ինչպես իմանում եմ, Ռուբենը⁴⁴ պիտի տրտնջա, բայց Ձեր այս երկարատև լռությունը ինձ հուսահատեցրեց: Համենայն դեպս կխնդրեմ մեղքն իմ վզին դնել և ոչ Ա.Խատիսյանի: Շտապեցնեմ ավելացնել, որ կատարվածի մեջ ոչ մի անհարմարություն չեմ գտնում, քանի որ ամռանը Եգիպտոս անօգուտ է մարդ փնտրել, բոլոր ունևորները տաքի ձեռքից խույս են տալիս Եթովպիա և այլուր: Մյուս կողմից, Ա.Խատիսյանը կարող է և այստեղ կազմակերպել փոխառությունը, որ արհամարելի շրջան չէ. այսպես թե այնպես, նա այստեղ է 4-5 օրից ի վեր, և ի մոտո պիտի հետ երթա: Չգիտեմ որքան հաջողություն էլ ունենա այս ձեռնարկը, բայց պետք է սկսել. ամեն ինչ կանենք ծրագիրը հաջողությամբ իրագործելու, սակայն քիչ անհարթ չէ որոշ խավերին ու անձանց չկամությունը, մասնավորապես Ամերիկայում: Տարաբախտաբար վերջերս Անդրանիկի⁴⁵ և իր նմանների աշխատանքով այդ ցավալի հակամարտությունը մեր կառավարության, չեմ վարանի ասել, և մեր ժողովուրդին դեմ ավելի ևս շեշտվեց. այդ են ապացուցանում Գարոյի⁴⁶ նամակները և հասնող թերթերը: Ահա թե ինչու ես մնում եմ իմ նախկին համոզման, որ վտանգավոր տագնապը վերջանալուց հետո իսկույն ձեռնարկեք կառավարության նոր կազմով գոհացումն տալ թուրքահայ և մասնավորապես չափավոր տարրերին: Ես գրել եմ, նորից պիտի կրկնեմ, որ կառավարության ու պառլամենտի կուսակցական գույնն ու բնույթը կորստաբեր կերպով է անդրադառնում, մանավանդ մեր ֆինանսական ձեռնարկների վրա: Փաշայի և կլիկի⁴⁷ ուժը հենց մեր կառավարության ու պառլամենտի միատարր հանգամանք է, որ նրանք շահագործում են անխղճորեն, և երկյուղ են անում, որ պիտի շահագործեն և այս փոխառության առթիվ: Անգամ այնպիսի դրամատեր, ինչպիսին է Եղ.Մայիլյան⁴⁸, որ կարծեմ այնտեղ, մեր երկրում վարիչ շրջաններից շատ հեռու չէ եղել, այստեղ զանազան առթիվ իր զրույցների մեջ բաց բերան քննադատությունը դարձնում է ի վնաս գործի: Ժամանակ է խլել մեր //-69 պետության հակառակորդների ձեռքից այդ գեները, որ նրանք չարաչար են գործածում, նույնիսկ անտես առնելով մեր ժողովուրդի ապրած այս տագնապների կործանարար շարանը: Գրել եմ, նորից կրկնեմ, որ ըստ իս չափավոր տարրերից և մասնավորապես թուրքահայերից կառավարության մեջ պիտի մտնին ոչ պոլիտիկաներ, այլ մեր ժողովուրդի ցավով տարված գործը, հայրենիքը սիրող անհատ-

ներ, որոնք իրենց փառքը փնտրում են մեր հայրենիքի բարօրության մեջ և ոչ թե չարամիտ քննադատում են: Քեզ հետ այս մասին խոսել ենք երկարորեն ժամանակին, և չեմ կարող հասկանալ, որ դու էլ շարունակեցիր մեր վարիչ կուսակցական շրջանների համառ գործունեությունը: Ենթադրե՞մ արդյոք, թե դուք բոլորդ առաջին նախարարներ Քաջագունի-Խատիսյան-Օհանջանյան գործողության ազատություն չառիք կամ պատասխանատվությունից քաշվելով չեք կամենում ունենալ, երկու պարագան էլ խորապես ցավալի է, եթե ճշմարիտ է:

Երկու օր առաջ վերադարձա Սպայից, որ ինչպես գիտեք, դաշնակիցների ու գերմանացիների համաժողովն էր: Թեև խորհրդածության նյութերի մեջ մեր հարցը դրված չէր, բայց գնացի համենայն դեպս, պատրաստ լինելով ամեն պատահականության: Պողոս փաշան սկզբում դեմ էր մեր գնալուն առհասարակ, վերջում ինքն էլ հետևեց ինձ: Արդ հասնելով պարզվեց, որ ճշմարիտ է, թե այս համաժողովը Վերսալի դաշնագրի կետերն իրագործելու համար է կայացած, բայց դաշնակիցները օգտագործելու են նաև թուրքական վերջին հակառաջարկների պատասխանը տալու: Այդպես էլ եղավ: Թուրքերին տված պատասխանը խիստ է, մասնավորապես այն մասը, որ վերաբերում է Հայաստանին, շատ կտրուկ: Ես կարդացի բնագիրը՝ նախքան հանձնելը, որ պիտի տեղի ունենա վաղը՝ ամսի 17-ին: Դաշնակիցները 1) մերժում են թուրք պատվիրակության վերջին հակառաջարկները, 2) պնդում են մայիսի 11-ին գրված դաշնագրի վրա գրեթե անփոփոխ, 3) Հայաստանի համար նորից հիշեցնում են Գերագույն խորհրդի որոշումը, տեսնել այն ազատ ու անկախ պետություն, որի սահմանները պիտի որոշի նախագահ Վ.Վիլսոնը և վերջապես 4) թուրքերին տալիս են 10 օր ժամանակ՝ հաշտության պայմանագիրն ստորագրելու կամ մերժելու իր վճռական անդարձ խոսքն ասել: Վերջում ավելացրած է Է.Վենիզելոսի հատուկ պահանջումով, որ եթե թուրքերը մերժեն այս դաշնագիրն ստորագրել՝ դաշնակիցներն իրավունք են վերապահում իրենց պայմաններն էլ ավելի խստացնել: Ուրիշ խոսքով, Է.Վենիզելոսը իրավունք է ձեռք բերած իր սկսած վերջին պատերազմի տևողության պարագային, հողային նոր հատուցումներ պահանջել: Դաշնակիցների այս վճռական լեզուն ամբողջապես արդյունք է հունական նորանոր հաջողությունների Անատոլիայում, ուր հույները իրենց շշմեցուցիչ հաղթություններով ապացուցեցին, թե Մուստաֆա Քեմալ⁴⁹ իր հարյուր հազարներով կազմ ու պատրաստ բանակներով, որ վաճառված թերթերի դիտավորյալ հերյուրանքն է: Ֆրանսիան ստիպվաց եղավ միանալ անգլո-հունական թեզիսին, որովհետև Դ.Լլոյդ Ջորջ ամեն անգամ արևելյան և արևմտյան, թուրքական նեղուցների եւ Հռենոսի խնդիրները միշտ միաժամանակ դրեց սեղանի վրա, հակառակ ֆրանսիական հետադիմական, իմպերիալիստ, կղերական ծախված մամուլի բոլոր վայնասունին: Ավելին կասեմ, մի ճնշողականությամբ, որ դառնում է չափազանց ալկյոհայտ բոլոր համաժողովներում վերջերս, Հայդու⁵⁰, Բուլոյն, Սպա միշտ նաև թուրքական հարցը դրվեց, ապա Գերմանիայի և Վերսալի դաշնագրի իրագործման: Եվ Ֆրանսիան միշտ ստիպված եղավ համակերպվել, Իտալիան էլ հետը: Ահա պատկերը այս երկրի դաշնա-

կիցների փոխհարաբերության: Այստեղ է գաղտնիքը նաև Է.Վենիզելուսի դիվանագիտական հաղթանակների: Ըստ երևույթին՝ Անգլիան կամաց-կամաց հույներին դնելու է թուրքերի կողմը և նեղուցների վրա, և գուցե Կ.Պոլսում: Առայժմ անցքերը այսպես են զարգանում: Անշուշտ այս բոլոր նրբամիտ ցանցի մեջ և Ռուսաստանի դեպի Բոսֆոր և հեռուները առաջխաղացման մտահոգությունը կա: Հունական պիրապետությունը (նեղուցների վրա) իրականի մեջ անգլիացունն է լինելու: Թողնենք սակայն այս ընդհանուր տեսությունը. դառնանք մեզ անմիջապես շահագրգռող խնդիրներին:

Գիտեմ, չորս կողմից դեպի թուրքաց Հայաստան տիրանալու մտածումներ և //70 առաջարկներ են ծագում: Հատկապես այս հարցի մասին խոսելու համար Է.Վենիզելուսի հետ երկարատև տեսակցություն ունեցա Սպայում, գեներալ Գ.Ղորղանյանի ներկայությամբ: Այս խորհրդակցության մեջ պարզվեց հետևյալը: Մեր առաջխաղացությունը դեպի թուրքաց Հայաստան այժմ խիստ վաղաժամ է. հարկավոր է 1) թուրքական դաշնագիրն ստորագրվի, 2) Վ.Վիլսոնը հայտնի իր որոշումը մեր սահմանների մասին, և 3) մեր բանակն այնքան լավ կազմակերպվի և իր թիկունքն այնքան ապահով լինի, որ հաջողության շանսը լինի անպայման: Վերջին հանգամանքի վրա [Է.]Վենիզելուսը առանձին ուշադրություն էր հրավիրում: Քանի որ, ասում էր նա, դուք մի սպառնալիք եք, որի լրջությունը կարող է անհայտ լինել թշնամուն, բայց թե դուք հառաջացաք ու չհաջողեցիք, կարող եք ամեն ինչ կորցնել, որովհետև ոչ մենք հույներս, և ոչ դաշնակիցները ձեզ օգնության չեն գալու: Հետևապես՝ պետք է շատ զգուշանալ: Այս մասին խոսեցինք երկարորեն և Մ.Խատիսյանի հետ, մեր էլ եզրակացությունը նույնն է՝ ոչ մի պայմանով առայժմ մեր բանակը սահմանն անցնելու չէ: Եվ ես հատկապես խնդրում եմ քեզ, չենթարկվես որևէ անպատասխանատու ռազմական շեֆի ազդեցությանը: Հայ-վրացական կործանարար ընդհարումը դեռ չեն մոռացել, ինչպես և այն, թե մինչև որ աստիճան Հ.Քաջազնունու կառավարությունը կրավորական մնաց:

Սպայից ստացած մի այլ տպավորությունս այն է, որ հավանաբար դաշնակիցները հունական գրավումները Կ.Պոլսի հետ պահեն՝ որպես գրավական մինչև իրագործվին թուրքական պայմանագրի բոլոր կետերը: Այսպես հայտարարեց ինձ [Է.]Վենիզելուս և նրանից առաջ քեզ հայտնի Ֆ.Բերթելոն⁵¹: Ես ասացի տպավորություն և ոչ որոշում, որովհետև ինքս որոշումը չգիտեմ, իսկ լսածս երկու հայտարարություններից ես միայն տպավորություն կարող էի ստանալ, ոչ համոզումն: Է.Վենիզելուսն հայտարարեց նաև, որ եթե թուրքերը տասն օրից դաշնագիրը չստորագրեն՝ անհավանական չէ Տրապիզոնի դեսանտը: Բայց, ավելացրեց, թուրքերը կստորագրեն, ստիպված են ստորագրելու: Սպայի անցուդարձը լիակատար ձևով քեզ հաղորդած լինելու համար ավելացնեմ, որ առաջին անգամ լինելով՝ մեր պատվիրակությունը դաշնակից պետությունների պաշտոնական ցանցը մտավ և բելգիական կառավարությունը ամենքի հետ մեզ էլ առաջարկեց ընդունել իր հյուրասիրությունը - ձրի բնակարան ու սնունդ: Ընդունեցի առաջինը, հրաժարվելով երկրորդից:

Կայարաններում մեզ դիմավորում էին հագած կայանապետերը: Արտաքին գործոց նախարարին Պ.Յիմանսին դու ճանաչում ես և շնորհակալիքս հայտնեցի:

Ստացա իմ մանդատի լրացուցիչ պաշտոնագիրը, որով իրավունք է տրվում ինձ ստորագրել թուրքական դաշնագիրը: Քեզ գրել էի, որ հավանաբար խնդրեմ մեր կառավարությունից արտոնություն փաշայի համար, որ նա էլ մեր կառավարության անունից ստորագրի ինձ հետ դաշնագիրը: Նա սկզբում համաձայնել էր, ես էլ պատրաստ էի դիմել Ձեզ, սպասում էի, որ իր խոստացած հեռագիրը բերեն ինձ: Հեռագրի փոխարեն՝ երեկ ինձ մոտ եկավ համագումարի նախագահ պ. Գ.Նորատունկյան⁵² և հայտնեց, թե փաշան պաշտոնապես հայտարարեց, թե՝ քանի որ կառավարություն չկա Երևանում, ինքը որևէ արտոնագիր չի խնդրի մեր կառավարությունից: Սակայն Պողոս փաշայի այս բացատրությունը տարբեր է. Լոնդոնից Ջ.Մալքունը եկավ, քեզ հայտնի տխրահռչակ Ջ.Մալքունը և համոզել է փաշային՝ հանձն չառնել այս զիջողությունը հաղեպ Յայաստանի կառավարության, և թե ինքը կհաջողեցնի ձեռք բերել նույն արտոնագիրը՝ անգլիական կառավարության միջամտությամբ, ինչպես այն հաջողվեց ռազմամթերքի պայմանագիր ստորագրելու համար: Առհասարակ վերջին ժամանակները Պողոս փաշան, զգալով որ ոտքի տակից հողը կորցնում է, աշխատում է օտար պետությունների և կառավարությունների վրա հենվել, իր ազդեցությունը իր ձեռքում պահելու համար: Այս հանգամանքի բոլոր տզեղությունն ու վտանգավորությունը հասցրի իրեն՝ փաշային - չեմ կարծում, թե համոզեցի: Քեզ խնդրում են ամեն անգամ, որ բրիտանական կամ այլ կառավարության հօգուտ փաշայի քեզնից զիջումներ պահանջի, նախ քննիր հանգամանորեն, ապա թե տուր համաձայնությունդ: Այսպես, ես գտնում եմ, որ բնավ կարիք չկար փաշային իրավունք տալ ստորագրելու //-71 պայմանագիրը անգլիացիների ռազմամթերքի համար, քանի որ այսպիսով ջլատվում է պետական միության գաղափարը և իշխանությունը վարկաբեկվում: Պետք է չզիջել օտարի միջամտությունը մեր գործերում, այն էլ մի որևէ փաշայի համար, լոկ նրա անձնական քմահաճույքին պատճառով:

Այսպես կոչված Ազգային համագումարը, ընտրելով նոր պատվիրակություն, որին ունենալու համար փաշան նախ դիվանագիտական հիվանդության վրա հիմնված հրաժարական տվեց ու շտապեց ինքը հեռագրել Պոլիս, Չմյուռնիա, Եգիպտոս, Ամերիկա, թե հրաժարվում է: Այսպիսով լավ աղմկեց գաղութները և ապա հետ առավ հրաժարական նոր պատվիրակություն կազմելով և դուրս թողեց Վ.Թեքեյանին և Ա.Չոպանյանին: Նոր պատվիրակության անդամներն են ինքը՝ փաշան, Եգիպտոսի հայտնի հակադաշնակցական գործիչ և ռամկավար Լ.Մտրտիչյան, և մեր բժիշկ Յ.Նեվրուզը: Գ.Նորատունկյանի ջանքերը որ համագումարը ամեն ինչ փոխանցի Հանրապետության պատվիրակության, չհաջողվեցին: Նույն Գ.Նորատունկյանը պնդեց նույնպես, որ փաշայի պատվիրակությունը դադարեցներ դաշնագիրն ստորագրելեն անմիջապես հետո, բոլոր նշաններից երևում է, որ փաշան պիտի շարունակե և այնուհետև աղմկել արտասահման: Ես տրամադիր եմ դաշնագիրն ստորագրելեն հետո բա-

ցարձակապես անգիտանալ փաշային և իր պատվիրակությունը: Վերջ պիտի տալ այս տխուր արկածին, որ կոչվում է Ազգային պատվիրակություն, որ իրոք միշտ գործեց մեր պետության դեմ:

Ջերմ բարևներով Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, թ.165-170: Բնագիր: Մեքենագիր, ձեռագիր լրացումներով:

№ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՐ
Ա.ԱՅԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ
ՆԱԽԱՐԱՐ Հ.ՕՐԱՆՋԱՆՅԱՆԻՆ՝ ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՍՏԱՈՐԱԳՐԵԼՈՒ
ՊԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԻՉՆ ՈՒ ԿՆԻՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ
ՍԱՍԻՆ

Ն.2282

20 օգոստոսի 1920թ., Փարիզ

«Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի պ. նախարարին. - Երևան.

Այս ոսկե գրիչը, որ նվեր ստացա Մանչեստրի հայ գաղութի ներկայացուցիչ պ. Հ.Կամբերյանից⁵³ և որով ստորագրվեց միացյալ Հայաստանի անկախությունը նվիրագործող դաշնագիրը և իմ անվանս սկզբնատառերը կրող կնիքը, որ դրվեցավ դաշնագրի վրա իմ ստորագրության առջև - այդ գրիչն ու կնիքը իմ խորին համոզմունքով ինձ չեն պատկանում այլևս, այլ պատկանում են հայ ազգին:

1920թ. օգոստոս 10-ի պատմական մեծ ակտին վերաբերյալ այդ հիշատակները ես որոշել եմ նվիրել մեր պետությանը ապագայում հայոց ազգային թանգարանին մեջ պահվելու համար:

Խնդրում եմ ուրեմն ընդունիլ, պ. նախարար, իմ այս երկու նվերները որ անձամբ Ձեզ կը հանձնեմ իմ վերադարձիս:

Ներփակ ուղարկում եմ Ձեզ այդ պատմական դարձած գրչի և կնիքի լուսանկարները:

Հարգանքներով ՀՀ պատվիրակության նախագահ՝ Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, թ.171: Բնագիր: Մեքենագիր: //-72

Ծանոթագրություններ

1. Արտեմ Փիրալյան - Փարիզում գործող ՀՀ պատվիրակության վիճակագրական ու տնտեսական հարցերով խորհրդական և ԱՄՆ ուղարկված ՀՀ տնտեսական առաքելության ելևմտային փորձագետ:

2. Թոմաս Վուդրո Վիլսոն - ԱՄՆ նախագահ 1913-1921թթ.:

3. Ստեփան Մամիկրոնյան (1859-1921) - Մոսկվայի Լազարյան ճեմարանի և համալսարանի սան, մասնագիտությամբ իրավաբան: Նույն տեղը եղել է թերթերի հրատարակիչ և Մոսկվայի Հայկական կոմիտեի նախագահ: 1919-1920թթ.՝ հայ-վրացական բանակցությունների և Անդրկովկասյան հանրապետությունների դիվանագիտական կոնֆերանսների

մասնակից:

4. Գարեգին Փաստրնաճյան - 1917 թվականից՝ Ամենայի հայոց կաթողիկոսի Ամերիկայի ներկայացուցիչ, 1919թ. հոկտեմբերի 9-ից՝ Հայաստանի Հանրապետության դեսպանորդը ԱՄՆ-ում:

5. Ջեյմս Ուոտսոն Ջերարդ - Գերմանիայում ԱՄՆ նախկին դեսպան, 1919-1920թթ.՝ Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի նախագահ:

6. Նիկոլայ Չխեիձե - Փարիզի հաշտության կոնֆերանսում վրաց պատվիրակության նախագահ:

7. Օգանեսով - հնարավոր չեղավ պարզել սույն անձի ով լինելը:

8. Հովհաննես Քաջազնունի - ԱՄՆ ուղարկված ՀՀ տնտեսական և քաղաքական առաքելության նախագահ:

9. Բնորոշման փոխարեն փաստաթղթում բազմակետ է, բառը կիրառվում է մեր կողմից, ելնելով նամակի բովանդակությունից:

10. Արտաշես Էնֆիաջյան - ԱՄՆ ուղարկված ՀՀ տնտեսական և քաղաքական առաքելության ելնմտային խորհրդական, 1918թ. նոյմբերի 4-ից մինչև 1919թ. օգոստոսի 10-ը՝ ՀՀ ֆինանսների նախարար:

11. Պողոս Նուբար փաշա - 1919-1920թթ.՝ Փարիզի կոնֆերանսում արևմտահայերի շահերն ներկայացնող Ազգային պատվիրակության նախագահ:

12. Մովսես Սարգսի Աճեմյան (1878-1950) - Լազարյան ճեմարանի և Մոսկվայի համալսարանի սան, բժիշկ և իրավաբան: Որպես ռազմական բժիշկ 1905թ. մասնակցել է ռուս-ճապոնական պատերազմին: Նոր Նախիջևանից և Դոնի բանակատեղից ընտրվել է Ռուսաստանի 2-4-րդ Պետական դումաների պատգամավոր, 1917թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մեկնել է Ֆրանսիա: Որպես Մանթաշյանց ընտանիքի փաստաբան կազմակերպել է Բաքվի նրանց նավթահորերի վաճառքը անգլիացիներին: 1920թ. հանդիսացել է ամբողջական Հայաստանի պատվիրակության իրավաբանական խորհրդական:

13. Պատգամավոր:

14. Հիշատակվում է Գեվորգ Ե Տփղիսեցի Սուրենյանցը:

15. Ջորջ Նաթանիել Քերզոն - 1919թ. հոկտեմբերի 29-ից՝ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար:

16. Ջեյմս Մալքոլմ - Հայ ազգային պատվիրակության ներկայացուցիչը Լոնդոնում, 1920թ. մայիսի 8-ից՝ նույն երկրում ՀՀ դեսպանորդի օգնական:

17. Դավիթ Գամբաշիձե - Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Լոնդոնում:

18. Գաբրիել Գրիգորի Ղորղանյան (1880-1954) - գեներալ-մայորի որդի, 1917թ.՝ ռուսական բանակի գեներալ-մայոր: 1415թ. նրա գերդաստանը գաղթել է Սուրմարիի Ղորղան ամրոցից Վրաստան, ուր կալվածքներ է ստացել Բորզալուի գավառում և 17-րդ դարում Թիֆլիսի մոտ հիմնադրված Մեծ և Փոքր Էնագետ գյուղերը: Եղել են պալատական ու զինվորական պաշտոնյաներ: Ինքը՝ Գ.Ղորղանյանը, կռվել է Ա աշխարհամարտի առաջին օրերից, 1918թ. մայիս - հունիսին մասնակից էր

Բաթումի կոնֆերանսի և Կ.Պոլսի բանակցությունների, որտեղ հանդիպումներ է ունեցել Թալեաթի և Էնվերի հետ:

1919թ. ապրիլի 10-ին գործուղվել է Ֆրանսիա՝ որպես Փարիզի կոնֆերանսում ՀՀ պատվիրակության զինվորական խորհրդական, եղել է պատվիրակության ռազմական բաժանմունքի ղեկավար: 1920թ. նշանակվել է զինվորական կցորդ: Լրացուցիչ տվյալները տես Հ.Ա.Ավետիսյանի հոդվածում Генерал Гавриил Григорьевич Корганян («Լրաբեր հասարակական գիտությունների», 1997, հ.2, էջ 155-177):

19. Կլոդ Բեյլի Ստոուքս - փոխ-գնդապետ, 1919թ. նոյեմբերից՝ Թիֆլիսում գործող բրիտանական քաղաքական առաքելության աշխատակից, 1920թ. սեպտեմբերի 13-ից՝ կայսրության Գլխավոր հանձնակատարն Անդրկովկասում:

20. Սուրհանդակներ:

21. Արմենակ Բարսեղյան - հայ Ազգային պատվիրակության չորս դաշ-նակցական անդամներից մեկը, Հայ ազգային 2-րդ համագումարի մասնակից: //-73

22. Ալեքսանդր Յովհաննեսի Խատիսյան (1874-1945) - նավթագործությամբ զբաղվող գերդաստանի և Կովկասում պետական գույքի վարչության պետի ընտանիքի զավակ, մասնագիտությամբ բժիշկ: Հաջորդելով նրա Ստեփանոս պապին 1909-1917թթ. ընտրվում է Թիֆլիսի քաղաքագլուխ, միաժամանակ 1914թ. սկսած՝ Կովկասյան քաղաքների միության նախագահ: 1915-1917թթ. եղել է հայոց Ազգային բյուրոյի փոխնախագահ, 1917-ին տեղափոխվել է Հայաստան, որտեղ նույնպես ընտրվել է Ալեքսանդրապոլ քաղաքագլուխ: 1918թ. Բաթումի պայմանագրի ստորագրյալներից մեկն ու հունիսի 30-ից՝ արտաքին գործերի նախարար: Նույն թվականի նոյեմբերի 14-ից մինչև 1919թ. մարտի 11-ը՝ խնամատարության նախարար, այդ ընթացքում հունվարի 30-ից հունիսի 5-ը գլխավորել է ներքին գործերի նախարարությունը, հետո մինչև 1920թ. մայիսի 5-ը՝ կրկին իրականացրել է ԱԳՆ-ի ղեկավարությունը: 1919թ. օգոստոսի 7-ից մինչև 1920թ. մայիսի 5-ը՝ հանդիսացել է Հայաստանի Հանրապետության վարչապետ: 1920թ. հունիսին գործուղվել էր արտասահման՝ Հայաստանի անկախության փոխառության համար դրամահավաք կազմակերպելու առաջադրանքով:

23. Ֆերդինանդ Թախթաճյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսը Կ.Պոլսում:

24. Էլեֆթերիոս Կիրիակու Վենիզելոս - 1910 թվականից մինչև 1920 թ. նոյեմբերի 14-ը հանդիսացել է Հունաստանի վարչապետ:

25. Կարլո Սֆորցա - Իտալիայի արտաքին գործերի նախարար:

26. Պոլ Լուի Ադրիան Անրի Հիմանս - 1918-1920թթ.՝ Բելգիայի արտաքին գործերի նախարար, 1920թ. նոյեմբերի 15-ից՝ Ազգերի Լիգայի խորհրդի նախագահ:

27. Դեվիդ Լլոյդ Ջորջ - 1916-1922թթ.՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ:

28. Իրենց բովանդակությամբ տեղեկությունները վերաբերվում են Բուլոնում գումարված Անտանտի երկրների Գերագույն խորհրդի նիստին:

29. Գրիգոր Սինապյան - Կ.Պոլսի քաջահմուտ փաստաբան, ամբողջական Հայաստանի պատվիրակության իրավաբանական խորհրդական, Հայ ազգային 2-րդ համագումարի (Փարիզ, 1920թ. մայիսի 5 - հունիսի 13-ը) փոխնախագահ: Այնուհետև՝ հոկտեմբերի 29-ից, ՀՀ գլխավոր հյուպատոսը Փարիզում:

30. Տիգրան Չայան - Փարիզում իր գործունեությունը ծավալած ամբողջական Հայաստանի պատվիրակության տեխնիկական խորհրդական: Այնուհետև՝ ՀՀ դեսպանորդը Աթենքում:

31. Հակոբ Նեվրուզ, բժիշկ - 1918թ. հոկտեմբերի 27-ին՝ Վ.Թեքեյանի հետ միասին և Պողոս Նուբարի թելադրությամբ, Եգիպտոսի Ազգային Միության կողմից ընտրվել է Ազգային պատվիրակության անդամ: Դեկտեմբերի սկզբին միասին ժամանել են Փարիզ, որտեղ մասնակցել է 1920թ. մայիսի 5-ից մինչև հունիսի 13-ը գումարված Հայ ազգային 2-րդ համագումարին: Եղել է ամբողջական Հայաստանի պատվիրակության տեխնիկական խորհրդական:

32. Ռուբեն Հովհաննեսի Բերբերյան (1873 Նոր Նախիջևան - 1942 Վորմս, Ֆրանսիա) - դրամատեր և նավթագործ, 1917-1919թթ.՝ Ռոստովում զետեղված Պետրոգրադի մուրհակների զեղչման բանկի, և Խարկովի հանքարդյունաբերական բանկի տնօրեն, ՀՀ պետական հսկիչ Սինաս Բերբերյանի եղբայրը: 1920թ.՝ Փարիզում, Ռուբեն Բերբերյանը եղել է ՀՀ պատվիրակության անդամ և մասնակցել է Բրյուսելում գումարված ֆինանսական կոնֆերանսին որպես Հայաստանի Հանրապետության դիտորդ:

33. Գ.Աստվածատուրյան - ՀՀ պատվիրակության անդամ լինելուց բացի, նոր տվյալներ չեն հայտնաբերվել:

34. Ջատիկ Հակոբի Խանզադյան (1886-1980) - 20-րդ դարի սկզբին՝ Ջնյուռնիայում և Փարիզում մասնագիտական պատրաստությունը ստանալուց հետո, Ֆրանսիայում նրան շնորհվել է ծովակալին նախորդող կոմանդորի կոչում: Այնուհետև վերադարձել է Թուրքիա, ուր կարգվել է ծովակալ ու գլխավոր քարտեզագիր: Հատուկ դասընթաց է մշակել Կ.Պոլսի Ռոբերտ քոլեջի համար: 1914թ. մեկնել է Բուլղարիա, որտեղ բանտարկվել է երկու տարով: 1916թ. անցել է Ֆրանսիա, հաստատվել է ծովակալի աստիճանում, վերսկսելով այդ երկրի ՌՕՌ Ակադեմիայում և նախարարության շրջանակներում իր աշխատանքը: 1919-1920թթ. հանդիսացել է Խաղաղության կոնֆերանսում ամբողջական Հայաստանի պատվիրակության տեխնիկական խորհրդական: 1920թ. հրատարակել է 25 քարտեզներից կազմված «Պատմական Հայաստանի աշխարհագրական միասնության ատլաս»: Ավելի ուշ՝ 1928-1952թթ. եղել է Մուրատ-Ռափայեյան վարժարանի տեսուչն ու տնօրենը Սևրում: Ֆրանսիական Դիմադրության շարժման և Բ աշխարհամարտի կռիվների մասնակից, 1967թ. ընտրվել է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի արտասահմանյան թղթակից անդամ: Այժմ էլ ԳԱԱ հիմնական կազմ գիտական գրադարանում պահվում է Ջ.Խանզադյանի գրական ֆոնդը: //-74

35. Տեքստում՝ Ենթիաշյան:

36. Սիմոն Հարությունի Հակոբյան (1880-1942) - 1919-1920թթ.՝ հայ

Ազգային պատվիրակության գլխավոր քարտուղար, 1924թ. Երևանի պետական համալսարանի դասախոս:

37. Արտավազդ Չանընյան - 1896-1899թթ. Փարիզում քիմիա ուսումնասիրելուց հետո երիտասարդ պոլսահայը ժամանել է Կահիրե, որտեղ 18 տարի դասավանդել է քաղաքի երկրորդական վարժարանում: 1917թ. դարձյալ տեղափոխվել է Փարիզ, որտեղ բնակվել է մինչև կյանքի վերջը: Հանդիսացել է Ազգային խորհրդում Եգիպտոսի ներկայացուցիչ, ամբողջական Հայաստանի պատվիրակության աջակցությամբ ստեղծված Հայկական մամլո գրասենյակի ղեկավար, 1920թ. սեպտեմբերից՝ հայ Ազգային պատվիրակության ատենադպիր: Ա.Ալպոյաճեան, Արաբական Միացեալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը եւ հայերը (սկիզբէն մինչեւ մեր օրերը): Գահիրե, Նոր Աստղ, 1960, էջ 136:

38. Վահան Գալուստի Թեքեյան (1878-1945) - գրող ու բանաստեղծ, Վ.Շեքսպիրի սոնետների, Ա.Բողլերի և Պ.Վեռլենի թարգմանիչ, հանդիսացել է Եգիպտոսի Ազգային Միության անդամ և Կ.Պոլսի Այգային ժողովի Էրուսաղեմի ներկայացուցիչ: 1905թ. Ալեքսանդրիայում հիմնել է «Շիրակ» հանդեսը, որը 1909թ. շարունակել է Կ.Պոլսում: 1915թ. ընտրվել է Հայ սահմանադրական ռանկավար կուսակցության կենտրոնական վարչության կազմը և Ալեքսանդրիայում հիմնել է «Արեվ» թերթը: 1916թ. նույնտեղ ենթարկվել է դաշնակցականների ահաբեկման և կորցրել է աջ աչքի տեսողությունը: Նույն թվականին դառնում է Եգիպտոսի միջկուսակցական Ազգային միության անդամ և նույնբերին՝ Ազգային պատվիրակության կազմում, բանակցում է Ֆրանսիայի ռազմական նախարարությունում Հայկական լեգեոնի կազմավորման հարցերով: 1918-ի սկզբին գործուղվում է Երուսաղեմ որպես անգլիական վարչության և պատրիարքարանի կից նույն պատվիրակության ներկայացուցիչ: 1918թ. հոկտեմբերի 27-ին՝ Պողոս Նուբարի պնդմամբ, Եգիպտոսի Ազգային Միության կողմից վերընտրվել է Ազգային պատվիրակության անդամ ու ղեկավարների սկզբին ժամանել է Փարիզ որտեղ հաստատվել է որպես այդ մարմնի լիազոր-ներկայացուցիչ: 1919թ. սեպտեմբերին Երևանում մասնակցել է ՀՀ կառավարման համակարգը փոխելու միտված անհաջող բանակցություններին: 1920թ. Հայ ազգային 2-րդ համագումարի ատենադպիր: Հիմնականում կենտրոնացել է արևմտահայ գաղթականների և որբերի տեղավորման գործի վրա, իսկ «Կես գիշերէն մինչև արշալոյս» բանաստեղծություններ պարունակող գրքում (Փարիզ, Վերածնունդ, 1919) արտացոլել է Մեծ եղեռնը: 1920թ. վերջին վերադարձել է Կ.Պոլիս, իսկ 1921-ին՝ նրա նախագահությամբ, տեղի է ունեցել Ռամկավար և Ազատական կուսակցությունների միացումը, ինչից հետո Վ.Թեքեյանը դարձել է ՌԱԿ-ի պաշտոնաթերթ «Ժողովուրդի ձայն»-ի խմբագիր: Նրա մասին. Վ.Թեքեյան, Նամականի: Կազմ. Ա.Սանճեան: Լոս Անջելես, Աբրիլ, 1983; Լ.Ա.Ասմարյանի, Վահան Թեքեյան (Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ, 1971) և Հ.Օշականի (Պեյրոս, ՀԲԸՄ, 1985) նույնանուն աշխատությունը:

39. Արշակ Հովհաննեսի Չոպանյան (1872-1954) - գրող, հայ Ազգային պատվիրակության քառոզչության մարմնի ղեկավար, Հայ ազգային 2-րդ համագումարի դերնախագահ: 1895թ. իր ծննդավայր Կ.Պոլսից

վտարանդվել է Փարիզ ուր ապրել է իր հետագա կյանքը: 1917թ. ամռանից ի վեր առաջարկում էր հրավիրել համահայկական համագումար ու վերակառուցել ազգային պատվիրակությունը: 1918-1919թթ.՝ որպես «Վերածնունդ» երկշաբաթաթերթի խմբագրապետ, դեմ էր ՀՀ ճանաչման: 1919թ. մայիսի 26-ից 1920թ. փետրավարը ձևավորում էր հակադաշնակցական ուղղության կուսակցություն ու 1921թ. ընտրվել էր նրա՝ ՌԱԿ-ի առաջին ատենապետ: 1920թ. ապրիլի 7-ին Կիլիկիայի Սահակ Բ կաթողիկոսի հետ միասին Կիլիկիայի խնդիր է հարուցել Ֆրանսիայի ԱԳՆ-ում, իսկ աշնանը գործուղվել է Բեյրութ, նույն հարցով ֆրանսիական հրամանատարության հետ բանակցելու կարգադրությամբ: Մինչև 1921թ. օգոստոսը գործում է Ադանայում, Տարսնում, Մերսինում, Ալեքսանդրեթում, Երուսաղեմում: Ազգային պատվիրակության կազմում մնաց մինչև Լոզանի դաշնագրի կնքումը 1923թ., այնուհետև նրա գաղթականական հանձնաժողովի անդամը միայն: Նրա կենսագրությունը հանգամանորեն ներկայացված է Կ.Դալլաքյանի «Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը» գրքում (Երևան, Սովետական գրող, 1987):

40. Աբրահամ Տեր-Յակոբյան - Հայ ազգային 2-րդ համագումարի դեր-նախագահ, հայ Ազգային պատվիրակության ներկայացուցիչը ԱՄՆ-ում, պրոֆեսոր:

41. Լևոն Մկրտիչյան (1865-1932) - եղել է հնչակյան կուսակցության ղեկավար, հրապարակախոս, Ալեքսանդրիայի հաշտարար դատարանի հոգաբարձու: 1920թ. հուլիսի 3-ին կայացած Հայ ազգային 2-րդ համագումարի որոշումով դարձել է Ազգային պատվիրակության անդամ:

42. Բացակայում է փաստաթղթում: //-75

43. Նամակում անսաթիվը բացակայում է, այն նշվել է՝ ելնելով նրա բովանդակությունից:

44. Ռուբեն Գերասիմի Տեր-Մինասյան (1882-1951) - էջմիածնի Գևորգյան, Մոսկվայ Լազարյան ճեմարանների և Ժնևի համալսարանի շրջանավարտ, Նիկոլ Դումանի և Գևորգ Չաուշի ռազմիկը, 1907թ. մայիսի 27-ի Սուլուխի կռվի մասնակից: 1915թ. Սասունի ինքնապաշտպանության ղեկավարներից էր, 1917-1918թթ.՝ որպես Հայոց ազգային խորհրդի անդամ, զբաղվել է արևմտահայ գաղթականների տեղավորմամբ: Հետագա 1918-1920թթ. եղել է ՀՀ խորհրդարանի անդամ, 1920թ. ապրիլի 3-ից՝ ՀՀ ներքին գործերի և զորական նախարար: 1921թ.՝ Ջանգեզուրում հակախորհրդային զինված դիմակայությունից հետո, անցել է Պարսկաստան, այնուհետև Կահիրե, Պաղեստին, Բեյրութ ու Փարիզ:

45. Անդրանիկ Թորոսի Օզանյան (1865-1927) - ազգային հերոս, գեներալ-մայոր: 1920թ. ամառը գտնվում էր Փարիզում ու Լոնդոնում, որտեղ իրականացնում էր Հայաստանի համար ռազմական օգնության միջոցառումներ:

46. Խոսքը Գ.Փաստրմաճյանի մասին է:

47. Մանկլավիկներ:

48. Եղիա Մայիլյան - իր եղբոր Դանիելի հետ հանդիսացել է Գրոզնու և Բաքվի նավթարդյունաբերական ձեռնարկությունների տեր, զբաղվել է ձկնագործությամբ, ֆինանսավորել է ՀՀ կառավարության հանքախու-

գական ծրագիրը: 1919թ. սեպտեմբերին դրամ է հատկացրել Շարուրի և Նախաիջևանի գաղթականների համար:

49. Մուստաֆա Քեմալ - թուրք ազգայնականների շարժման ղեկավար, երիտթուրքերի ցեղասպան քաղաքականության հաջորդող: Ավելի ուշ ընտրվել է հանրապետություն հռչակված Թուրքիայի նախագահ:

50. Նշված տեղանունը հստակեցման չի ենթարկվում:

51. Ֆիլիպ ժոզեֆ Լուի Բերթելո - Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար:

52. Գաբրիել Գրիգորի Նորատունկյան (1852-1936) - ամբողջական Չայաստանի պատվիրակության անդամ, Փարիզում հրավիրված Չայ ազգային 2-րդ համագումարի (1920թ. մայիսի 5 - հուլիսի 13-ը) նախագահ: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտին նշանակվել է սահմանագծման միջազգային հանձնաժողովի անդամ, 1894-ին ընտրվել է Կ.Պոլսի Ազգային ժողովի նախագահ, 1908-1912թթ. եղել է Օսմանյան կայսրության առևտրի, ապա՝ հանրօգուտ աշխատանքների, 1912-1913թթ.՝ արտաքին գործերի նախարար:

53. Հովհաննես Կամբերյան - Մանչեստրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ, այնուհետև՝ հյուպատոս: //-76

©

23 էջ

«Բանբեր Չայաստանի արխիվների»: Երևան, 2012, հ.1-2 (119-120), էջ 60-76: